ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ
Հեռ: +374 11 314 515

2019թ.-ի հուլիսի 3-ին ԳԱՏՕ ծրագրի գրասենյակում տեղի է ունեցել նախամրցութային հանդիպում՝ հետաքրքրված հայտատուների հետ

Պարզաբանումներ
ՀՆՀ # 260619-01 Ինժեներական նախագծի պատրաստում Փոքր Վեղի գյուղի ոռոգման համակարգի օպտիմալացման ծրագրի շրջանակում

Ամիս, ամսաթիվ՝ 3 հուլիսի, 2019թ. Վայր՝ ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ)

N	Հարց	Պատասխան
1.	Ինչպե՞ս ձեռք բերել DUNS համար՝ հայտում ներկայացնելու համար:	Հայտատուի կողմից կտրամադրվի որևէ կոնտակտային տվյալ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակի կողմից էլեկտրոնային հասցե ուղարկելու համար, որտեղ անհրաժեշտ տվյալների գրանցմամբ հնարավոր կլինի ձեռք բերել DUNS համարը: Բոլոր ԱՄՆ և օտարերկրյա կազմակերպությունները, որոնք ստանում են 25,000 ԱՄՆ դոլար և ավելի բարձր արժողությամբ առաջնային պայմանագիր/գնման պատվեր կնքելու հնարավորություն, պարտավոր են պայմանագիրը կնքելուց առաջ ստանալ DUNS համար: Կազմակերպություններն ազատվում են այս պահանջից, եթե բոլոր աղբյուրներից նրանց ստացած համախառն եկամուտը նախորդ ֆիսկալ տարում ցածր է եղել 300,000 դոլարից: Նման հիմքով ազատվելու համար ME&A-ն յուրաքանչյուր հայտատուից պահանջում է ստորագրել ինքնահավաստագիր:
2.	Արդյո՞ք անհրաժեշտ է ունենալ նախագծման թույտվություն:	Սույն ՀՆՀ-ում նման պահանջ չկա :

3.	ՀՆՀ-ում նշվում է աշխատանքների կատարման առավելագույն ժամկետը 50 օր։ Արդյո՞ք խոսքը վերաբերում է աշխատանքային օրերին։	ՀՆՀ-ում նշվում է, որ կատարման ժամկետը 50 օրացուցային օր է ։
4.	ՀՆՀ-ի հավելված Դ-ում առաջարկվող ոռոգման համակարգի սխեմատիկ գծագիրն է։ Խնդրում եմ պարզաբանել ի՞նչ համակարգի մասին է խոսքը։	Խոսքը գոյություն ունեցող ոռոգման համակարգի մասին է։ Սույն ՀՆՀ-ն թարգմանվել է անգլերենից հայերեն և սա թարգմանչական վրիպակ է։ «ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԳԾԱԳԻՐԸ»-ի փոխարեն պետք է լինի « ԳՈՐԾՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԳԾԱԳԻՐԸ»։
5.	Հայտատուների համար ուղեցույց բաժնում պահանջվում է ներկայացնել պահանջվող ծախսերի մոտավոր հաշվարկը։ Արդյո՞ք սա արդեն նախագծման փուլում պահանջվող կետ չէ։	Չի պահանջվում մանրամասն ներկայացնել ծավալաթերթ և նախահաշիվ։ Դուք առաջարկում եք մեթոդ և ներկայացնում ձեր առաջարկի մոտավոր գումարային արժեքը։
6.	Գնահատման չափանիշներ և միավորների համակարգ բաժնում գրված է, որ հաշվի է առնվելու ծախս-օգուտ հարաբերակցությունը։ Կպարզաբանե՞ք։	Սա հայեցակարգի մեթոդաբանության փուլ է։ Դուք առաջարկում եք հասկանալի հայեցակարգ։ Գնահատման փուլում ԳԱՏՕ ծրագիրն է հաշվի առնելու գնահատման և շահագործման ծախսերը։ Դիմող կազմակերպություններից չի պահանջվում ներկայացնել հետագա շահագործման ծախսերը։
	Արդյո՞ք տեխնիկական և գնային առաջարկները պետք է ներկայացնել առանձին ծրարներով։	Այո, ինչպես նշվում է ՀՆՀ-ի հայտատուների համար ուղեցույց բաժնում. «Հայտը պետք է դրված լինի երկու առանձին փակ ծրարների մեջ, որոնք կնքված ու ստորագրված են հայտատուի կողմից։ Առաջին ծրարում դրվում է Տեխնիկական առաջարկը, երկրորդում՝ Գնառաջարկը։ Երկու ծրարների վրա պետք է գրված լինի՝ հայտատու կազմակերպության անվանումը, «Փոքր Վեդի գյուղի ոռոգման համակարգի օպտիմալացման ծրագիր» և ՀՆՀ-ի համարը՝ ՀՆՀ # 260619»։